ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.10.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/82

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Մասիսի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
Մասիսի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Ա. Կարապետյանի,
«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Մասիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման, նախկին մարզադպրոցի, ՄՊՍԿ և ՔԿԳ ՀՈԱԿ-ների մ/շ հիմնանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 14.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1. հանձնաժողովի 10.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը որակավորման չափորոշիչ և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների մասով 0 տոկոս գնահատելու մասին որոշումը,
2. ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Իրտիգ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 14.09.2021թ.-ին:

15.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/82 համարի ծածկագիրը:

24.09.2021թ.-ին և 14.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.10.2021թ.-ին:

2. **<u>«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**.

«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն 14.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Մասիսի համայնքապետարանի կարիքների համար՝ հայտարարվել է «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի 10.09.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, որ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտի որակավորման և աշխատանքային փորձառությունների տոկոսային հանրագումարը 0 է և

պատճառն այն է, որ Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթի փաստաթղթերի հետ չեն կցվել աշխատանքային ռեսուրսներ և որակավորման չափորոշիչներն հիմնավորող փաստաթղթերը /վերը նշված փաստի մասին տեղեկացել ենք բանավոր՝ հանձնաժողովի կողմից/:

Արդյունքում www.gnumner.am կայքում հրապարակվել է թիվ 3 արձանագրությունը, որի եզրափակիչ մասում արձանագրվել է, որ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվում <<Իրտիգ>> ՍՊԸ-ն /թիվ 3 արձանագրությունը կցվում է/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ինչպես արդեն նշել ենք, Մասիսի համայնքապետարանի կարիքների համար հայտարարվել է "ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29" ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի 10.09.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, որ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտի որակավորման և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների տոկոսային հանրագումարը 0 է և պատճառն այն է, որ Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթի փաստաթղթերի հետ չեն կցվել աշխատանքային ռեսուրսներ և որակավորման չափորոշիչներ հիմնավորող փաստաթղթերը:

Այնուհետև www.gnumner.am կայքում հրապարակվել է թիվ 3 արձանագրությունը, որի եզրափակիչ մասում արձանագրվել է, որ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվում <<Իրտիգ>> ՍՊԸ-ն:

Տվյալ պարագայում “ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29” ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը՝ որակավորման և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների մասով 0 տոկոս գնահատելով գործել է ոչ իրավաչափ, մասնավորապես՝ գնահատող հանձնաժողովի կողմից «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ին չի տրամադրվել որևէ շտկման հնարավորություն, որը թույլ կտար մասնակցին գնահատող հանձնաժողովին ներկայացնելու որակավորման և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների մասով հիմնավորող փաստաթղթեր /կցվում են/ և որի արդյունքում արդեն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից կարող էր ճանաչվել «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման.»:

Ելնելով վերոգրյալից՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1. հանձնաժողովի 10.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը որակավորման չափորոշիչ և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների մասով 0 տոկոս գնահատելու մասին որոշումը,
2. ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Իրտիգ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Ի լրումն ներկայացված բողոքի, Ընկերությունը 25.09.2021թ.-ի ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 13.09.2021թ. «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերի և ի պատասխան Մասիսի համայնքապետարանի կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/82 ծածկագրով բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշման, հայտնում ենք հետևյալը՝

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275 փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի

(այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Բողոքները քննող անձին հայտնում ենք, որ «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ին չի տրամադրվել որևէ շտկման հնարավորություն, որը թույլ կտար մասնակցին գնահատող հանձնաժողովին ներկայացնելու որակավորման և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների մասով հիմնավորող փաստաթղթեր և որի արդյունքում արդեն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից կարող էր ճանաչվել «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն:

Այն, որ մասնակցին չի տրվել շտկման հնարավորություն, չի հերքում նաև Պատվիրատուն՝ իր կողմից ներկայացված դիրքորոշմամբ, որով մասնավորապես նշել է, որ եթե մասնակցին տրամադրվեր շտկման հնարավորություն, ապա այդ պարագայում կխախտվեր գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը և մյուս մասնակիցների գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությանը:

Վերոհիշյալ փաստական հանգամանքներում ակնհայտ է դառնում «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ և 42-րդ կետի պահանջների խախտումը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք բավարարել «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/82 ծածկագրով բողոքը:»:

3. **<u>Մասիսի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>**.

Բողոքներ քննող անձը 15.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/14934-2021 գրությամբ դիմել է Մասիսի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի 14.09.2021թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 16.09.2021թ.-ին ներկայացված թիվ 602 դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Մասիսի համայնքապետարանի կարիքների համար հայտարարվել է «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման մրցույթ, որին մասնակցության հայտ է ներկայացրել 8 մասնակից, այդ թվում «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն:

«ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը կազմվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, այն է «Ընտրված խորհրդատուն կարող է որոշվել նաև այն խորհրդատուին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և աշխատանքային փորձին, աշխատակազմին, ծառայության մատուցման առաջարկվող կարգին կամ հրավերով սահմանված ոչ գնային այլ պայմանին (պայմաններին) հրավերով սահմանված կարգով տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է»:

Հայտերի բացումից հետո գնահատող հանձնաժողովի անդամները գնահատելով մասնակիցների հայտերը գործել են իրավաչափ, մասնավորապես «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտի որակավորման և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների %-ային հանրագումարը գնահատվել է 0 և պատճառն այն է, որ Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթի մեջ բացակայում էին վերոնշյալ փաստաթղթերը:

Թե ինչո՞ւ գնահատող հանձնաժողովը Ա/Ձ-ին չի տվել շտկման հնարավորություն՝ պատճառն այն է, որ այդ պարագայում կարող էր և կխախտվեր գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը և մյուս մասնակիցների գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունը:

Ուստի հայտերի գնահատման արդյունքում հանձնաժողովը հաղթող մասնակից է ճանաչել «Իրտիգ» ՍՊԸ-ին:

Քանի որ armeps.am էլեկտրոնային համակարգում առանձնացված բաժին չկար հրավերով սահմանված 1.1 և 1.2 հավելվածները կցելու համար, այդ իսկ պատճառով չի կցել՝ ենթադրելով հետագայում կունենա շտկման հնարավորություն

10.09.2021թ. «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը հրապարակելուց հետո ի պատասխան «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հարցադրմանը, թե ինչո՞ւ իրեն չի տրվել շտկման հնարավորություն պատասխանել ենք, որ նշված ֆայլերը կարող էր zip տարբերակով կցեր հավելված 1-ին և ներկայացներ մասնակցության հայտը:

Հավելենք նաև որ մասնակիցը օրենքով սահմանված կարգով ուներ պարզաբանման ժամկետ, բայց ենթադրեք որ այդ ժամկետն էլ էր բաց թողել, ապա հրավերում առկա էր հանձնաժողովի քարտուղարի հեռախոսահամարը, որպեսզի ցանկացած հարցի դեպքում դիմեն քարտուղարին:

Խնդրում եմ հաշվի առնելով վերոգրյալը «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի բողոքը»:

Ի լրումն վերոնշյալ դիրքորոշման, Պատվիրատուն 28.09.2021թ.-ի թիվ 634 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/82 ծածկագրով բողոքի՝ ի լրումն թիվ 2-ի, հայտնում եմ ձեզ, որ մասնակիցներից «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն մրցույթի մասնակցության հայտը ոչ թե ներկայացրել է անհամապատասխանություններով, այլ չի ներկայացրել հրավերով պահանջվող փաստաթղթերը:»:

4. **<u>ԳԲՔԱ-ԼՕ</u>**-2021/82 **<u>բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Մասիսի համայնքապետարանի կողմից Մասիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման, նախկին մարզադպրոցի, ՄՊՍԿ և ՔԿԳ ՀՈԱԿ-ների մ/շ հիմնանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 27.08.2021թ.-ին հայտարարվել է «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը որակավորման չափանիշ և աշխատանքային փորձ չափորոշիչների մասով գնահատվել է 0 տոկոս (%):

iv. Նույն արձանագրության համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Իրտիգ» ՍՊԸ-ն:

v. www.gnumner.am համացանցային կայքում 10.09.2021թ.-ը հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 11.09.2021-ից 15.09.2021թ-ը:

5. **Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը**.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից 14.09.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու

գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով

նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվել է հետևյալը.

«2.2 Մասնակիցը հայտով պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

2.2.1 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.2 կետով նախատեսված գրավոր հայտարարություն: Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

2.2.2 «Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշի գնահատման համար՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթա¬ցա¬կարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսանհինգ տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նախկինում կատարված պայմանագրերը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ պահանջի դեպքում սահմանված ժամկետում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Սույն ընթացակարգի գնման առարկայի նախահաշվային գնի 25 տոկոսից ցածր արժեք ունեցող պայմանագրերը չեն գնահատվի:

Գնահատման չափանիշը՝ առավելագույն քանակ:

Առավելագույն քանակի պայմանագրեր ներկայացրած մասնակցի առաջարկը գնահատվում է առավելագույն՝ «100» միավոր: Առավելագույն միավոր ստացած մասնակցի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների «Աշխատանքային փորձ» չափանիշը հետևյալ բանաձևով՝

ԱՓ=ԳՊ X 100 / ԱՊ

Որտեղ՝

ԱՓ-գնահատվող մասնակցի աշխատանքային փորձին տրվող միավորն է,

ԳՊ-գնահատվող մասնակցի կողմից ներկայացված պայմանագրերի քանակն է,

ԱՊ-առավելագույն միավոր ստացած մասնակցի կողմից ներկայացված պայմանագրերի քանակն է,

Հրավերի նվազագույն պահանջները չբավարարող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 40 տոկոս :

2.2.3 «Աշխատակազմի որակավորում» չափանիշի գնահատման համար՝

ա) աշխատակազմում պետք է ներգրավված լինի առնվազն 1 հոգուց բաղկացած ինժեներատախնիկական անձնակազմ՝ առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով:

Սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում պահանջի դեպքում հանձնաժողովին կներկայացնի ներկայացված մասնագետների որակավորումը հիմնավորող փաստաթղթերը (անձնագիր, դիպլոմ, արտոնագիր, ռեզյումե, վկայագիր, հավաստագիր և այլն):

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի մասով գնահատվում է հետևյալ ձևով.

Աշխատակազմում ընդգրկված մասնագետների գնահատումը կորոշվի աշխատանքային փորձի ժամանակահատվածի համեմատության կարգով:

Գնահատման չափանիշը՝ առավելագույն տարիների փորձ:

Առավելագույն տարիների փորձ ունեցող մասնագետ ներկայացրած մասնակցի առաջարկը գնահատվում է առավելագուն՝ «100» միավոր: Առավելագույն միավոր ստացած մասնակցի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների «Աշխատակազմի որակավորում» չափանիշը հետևյալ բանաձևով՝

ԱՈ=ԳՏ X 100 / ԱՏ

Որտեղ՝

ԱՈ-գնահատվող մասնակցի աշխատակազմի որակավորմանը տրվող միավորն է,

ԳՏ-գնահատվող մասնակցի կողմից ներկայացված հիմնական աշխատակազմի մասնագետի աշխատանքային տարիների քանակն է,

ԱՏ-առավելագույն միավոր ստացած մասնակցի կողմից ներկայացված հիմնական աշխատակազմի մասնագետի աշխատանքային տարիների քանակն է,

Հրավերի նվազագույն պահանջները չբավարարող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 20 տոկոս:»

Հրավերի 5-րդ կետի 5.2 ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ բ) խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում, մասնակիցների գնային առաջարկները գնահատվում են հետևյալ կարգով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի ֆինանսական առաջարկը գնահատվում է 100 միավոր, իսկ մյուս մասնակիցների ֆինանսական առաջարկներին տրվող միավորները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

ԳՄ= ՆԳ X 100/ԳԳ,

որտեղ՝

ԳՄ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,

ՆԳ-ն նվազագույն գինն է առանց ԱԱՀ,

ԳԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է առանց ԱԱՀ:

«գնային առաջարկ» որակավորման չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 40 տոկոս:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մասիսի համայնքապետարանի կողմից Մասիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման, նախկին մարզադպրոցի, ՄՊՍԿ և ՔԿԳ ՀՈԱԿ-ների մ/շ հիմնանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 27.08.2021թ.-ին հայտարարված «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը որակավորման չափանիշ և աշխատանքային փորձ չափորոշիչների մասով գնահատվել է 0 տոկոս (%), իսկ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Իրտիգ» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված www.gnumner.am համացանցային

կայքում 10.09.2021թ.-ը հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 11.09.2021-ից 15.09.2021թ-ը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովը, չկիրառելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերը, այն է՝ ծանուցել մասնակցին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ը կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առկա անհամապատասխանությունները, սույն դեպքում, թույլ է տրվել վերոնշյալ դրույթների խախտում:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասիսի համայնքապետարանի կողմից Մասիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման, նախկին մարզադպրոցի, ՄՊՍԿ և ՔԿԳ ՀՈԱԿ-ների մ/շ հիմնանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 27.08.2021թ.-ին հայտարարված «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացնելով «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը որակավորման չափանիշ և աշխատանքային փորձ չափորոշիչների մասով գնահատվելով 0 տոկոս (%)՝ գործել է ոչ իրավաչափ, որպիսի պայմաններում «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից 14.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/82 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. պարտավորեցնել «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

- հանձնաժողովի 10.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը որակավորման չափորոշիչ և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների մասով 0 տոկոս գնահատելու մասին որոշումը,

- ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Իրտիգ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**